Նիստերի ժամանակ պարզուեց, որ կողմերը շատ են հեռու իրարից և ընդհանուր լեզու չունեն. նրանց բաժանում էին և ազգային ներհակ ձգտումները, և՛ տարբեր վերաբերումը դէպի պատերազմը, դէպի Թիւրքիան ու Ռուսաստանը, և՛ փոխադարձ անվստահութիւնը: Խորհրդակցութիւնները դրական արդիւնք չունի: Եւ որովհետև շուտով բացուելու էր Անդրկ. Սէյմը և խորհրդակցութեան մասնակցող մահմեդական ներկայացուցիչներն էլ Սէյմի անդամներ էին ու պիտի մեկնէին, վճռուեց այդ բոլոր հարցերի քննութիւնը տեղափոխել Թիֆլիս: Միակ գործնական օգուտը եղաւ այն, որ որոշուեց մի քանի խառն պատուիրակութիւններ ուղարկել Գանձակ, Նուխի, Խաչմազ, որոնք մի պահ մեղմացրին որուած դրութիւնը, բայց, կարճ ժամանակից յետոյ, կրքերը բռնկուեցին աւելի սուր մոլեգնութեամբ:

Հետապնդելով հանդերձ հաշտասէր ու բարեկամական վերաբերում Թուրքերի նկատմամբ՝ Ազգ. Խորհուրդը ձեռնարկեց շրջանների ինքնապաշտպանութեան կազմակերպման գործին: Այդ նպատակով դէնք ու ռազմամթերք էր հայթայթուում, հայաբնակ վայրերին հրահանգիչներ ու մարտական ղեկավարներ էին տրուում, կազմակերպուում ու մարզուում էին դէնքի ընդունակ ուժերը: Հիմնական նպատակն էր՝ որև է բախումի տեղիք չտալ և Թուրքերի գործած յարձակման դէպքում պաշտպանուել:

Միևնոյն ժամանակ, Ազգ. Խորհուրդը ճիգ էր թափում բանալու երկաթուղին՝ Բագուում հաւաքուած զօրամասերը ռազմաճակատ ուղարկելու նպատակով, բայց այս ուղղութեամբ կատարուած բոլոր քայլերը անցան ապարդիւն: Ապր. 13-ին Ազգ. Խորհուրդը վերջին անգամ ևս փորձեց Պարսկաստանի ճակատից եկած 500 հայ և վրացի զինուորներին ուղարկել Թիֆլիս. Ալեաթ կայարանից հայերը յետ դարձուեցին. Թուրքերը ճանապարհ տուին միայն վրացիներին...

Այդ առթիւ, Ազգ. Խորհուրդը մի անգամ էլ դիմեց Մահմ. Ազգ. Խորհրդին՝ բացատրելով, թէ ի՞նչ վտանգ է սպառնում մեծաքանակ զինուորների խռնելը Բագուում: Այս դիմումն էլ մնաց անհետևանք: Նոյն հարցով դիմում արուեց և՛ Սէյմին—արդիւնքը եղաւ նոյնը: Ազգ. Խորհուրդը գտում էր, որ հազարաւոր հայրենաբաղձ հայ զինուորների արգելափակումը Բագուում կարող է տալ աղէտաւոր հետևանքներ հէնց Բագուի համար, գերմարդկային ոյժ էր թափում այդ զինուորներին հեռացնելու համար, բայց չէր յաջողում: Այդ պայմաններում, զինուորների ներկայութիւնը Բագուում նպաստաւոր կարող էր լինել միայն բոլշևիկներին. Թուրքերը կուրօրէն բռունցք էին պատրաստում հէնց իրենց գլխի համար: Նրանց հաշիւն էլ, սակայն, այն էր, որ թոյլ չտան մի քանի հազար հայ զինուորների մեկնումը ռազմաճակատ՝ Թիւրքերի դէմ:

Ի տես այս անտանելի կացութեան և ճակատից հասնող աննպաստ լուրերի, մարտ 3-ի նիստում, Ռոստոմը Ազգ.Խորհրդի առջև դրեց հետևեալ խնդիրները. — ի նկատի ունենալով, որ մեր դրութիւնը օրէցօր ծանրանում է, որ Թուրքերը խաղում են մեզ հետ և աշխատում ժամանակ շահել, անհրաժեշտ է կանխել և նախաձեռնութիւնը առնել մեր ձեռքը: Այդ նպա-